

որ պիտի նկատես իբրեւ նշան մը Քահանայապետական Բարութեան Քեզի հանդէպ : Հուսկ Տէրութեանդ համար երկար եւ անվրտանգ կեանք կը հայցեմ Ամենակարող Աստուծմէ (12) :

Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովի վարիչ Կարգինալին նամակէն առաջ նորընտիր Քահանայապետը արդէն պատասխանած էր Հայոց Հայրապետին, 6 Օգոստոս 1667 թուակիր թուղթով :

Այս գրութեան մէջ Ն. Ս. Կղեմէս Թ. իր գոհունակութիւնը կը յայտնէ որ Յակոբ Կաթողիկոս կ'ընդունի՝ թէ Հռոմի Քահանայապետը Գերագոյն Պետն է Կաթողիկէ Եկեղեցւոյ, յաջորդը Ս. Պետրոսի, Հովուապետը ուղղափառ հօտին եւ Փոխանորդը Յիսուսի Քրիստոսի : Սակայն դիտել կուտայ նաեւ՝ թէ Հայոց Կաթողիկոսը կը սխալի կարծելով որ պէտք է ջրախառն գինիով պատարագել եւ այս սովորութեան համար պէտք է յանդիմանել Բոլոնիոյ Հայ Արքեպիսկոպոսը. ընդհակառակն այս մասին գովելի է Թորոսովիչ, որ կը հետեւի Փլորենտեան եւ Տրիդենտեան Ժողովներուն եւ Առաքելական Աւանդութեան : Քաղցրօրէն կը հրաւիրէ Յակոբ Կաթողիկոսը նաեւ այս կէտին մէջ Հռոմէական Գահին հետեւելու, մանաւանդ որ ինք անձամբ այս հարցին լուծումը Ս. Պապին կը թողու :

---

(12) Archivio S.C.P.F. Lettere Volgari, Vol.52, fol. 53.